

ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Շահումյան համայնքի ավագանու արտահերթ նիստի վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Շահումյան	Ավագանու արտահերթ նիստ	25.12.2020թ.	15:00	Շահումյանի համայնքապետարան, համայնքի ղեկավարի աշխատասենյակ (գ.Շահումյան, 1 փող. 66)

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2020թ. դեկտեմբերի 25-ին՝ ժամը 15.00-ին Շահումյան համայնքի ղեկավարի աշխատասենյակում կայանալիք համայնքի ավագանու հերթական նիստի

Ժամը՝ 15.00

1. ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020Թ-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

զեկուցող՝ Է. Մանուկյան

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ԽԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

զեկուցող՝ Ռ. Մինասյան

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ԽԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ „ՇԱՀՈՒՄՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՐԹԱՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ,, ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿՆԵՐԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

զեկուցող՝ Է. Մանուկյան

4. ՀՀ ԼՈՌԻ ԽԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ-Ի ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

զեկուցող՝ Ս. Սոսյան

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020 Թ-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,,
Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի
դրույթներով՝ **ավագանին որոշում է.**

Հաստատել Շահումյան համայնքի ավագանու 2020թ-ի դեկտեմբերի 25-ի
նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

2020թ-ի դեկտեմբերի 25-ի թիվ 11 նիստի

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնքի
վարչական տարածքում 2021թ-ի համար տեղական տուրքերի և վճարների
տեսակները, դրույքաչափերը սահմանելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնքի
ղեկավարի վարձատրության չափը, համայնքապետարանի և „Շահումյան
գյուղական համայնքի կրթամարզամշակութային համալիր,, ՀՈԱԿ-ի
աշխատակազմերի աշխատակիցների թվաքանակները,
հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու
մասին:
3. ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի 2021թ-ի բյուջեն հաստատելու
մասին:

Համայնքի ղեկավար՝

ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՌԱԻՍԱ ՄԻՆԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021
ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ
ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ
ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌԱԽՍԱ ՄԻՆԱՍՅԱՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին“, Հայաստանի
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերով, „Տեղական
տուրքերի և վճարների մասին“, Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-
րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շահումյան համայնքի վարչական տարածքում 2021 թվականի համար
տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը՝ համաձայն
հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման
օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ղեկավար՝

ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՌԱԽՍԱ ՄԻՆԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ,
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ
„ՇԱՀՈՒՄՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԿՐԹԱՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՀԱՄԱԼԻՐ,, ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐԻ
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿՆԵՐԸ,
ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ
ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ղեկավարվելով ‘Տեղական ինքնակառավարման մասին’ Հայաստանի
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ, 28-րդ կետերի, "Նորմատիվ
իրավական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-
րդ մասի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով՝ համայնքի
ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի ղեկավարի
վարձատրության չափը, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների
թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն
հավելված 1-ի:

2. Հաստատել ՀՀ Լոռու մարզի „Շահումյան գյուղական համայնքի
կրթամարզամշակութային համալիր,, ՀՈԱԿ-ի աշխատակազմի աշխատակիցների
թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն
հավելված 2-ի:

3. Ուժը կորցրած ճանաչել Շահումյան համայնքի ավագանու 20.11.2020թ-ի թիվ
30-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021թ-ի հունվարի 01-ից:

Համայնքի ղեկավար՝

ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՌԱԻՍԱ ՄԻՆԱՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,
ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

Աշխատակիցների թվաքանակը՝ 15 :

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար)	Ամսեկան աշխատավարձ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
1	Համայնքի ղեկավար	1	320000	320000
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	200000	200000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
3	Աշխատակազմի քարտուղար	1	250000	250000
4	Աշխատակազմի գլխավոր մասնագետ	1	180000	180000
5	Առաջատար մասնագետ-հաշվապահ	1	175000	175000
6	Առաջատար մասնագետ	4	175000	700000
7	Առաջին կարգի մասնագետ	1	150000	150000
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ				
8	Տնտեսվար	1	120000	120000
9	Վարորդ	2	110000	220000
10	Բանվոր	1	110000	110000
11	Տեխնիկական աշխատող	1	110000	110000
	Ընդամենը	15		2 535 000

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀՀ ԼՈՐԻՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱՊԵՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՐԹԱՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 15:

Ը/Ը	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար)	Ամսեկան աշխատավարձը /դրամ/
ՀՀ ԼՈՐԻՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱՊԵՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՐԹԱՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ>> ՀՈԱԿ-Ի՝ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ				
1	Տնօրեն	1	160 000	160 000
2	Հաշվապահ	1	115 000	115 000
3	Գրադարանավար	1	115 000	115 000
4	Խմբավար սպորտի	1	100 000	100 000
5	Խմբավար երգի	1	100 000	100 000
6	Տնտեսավար	1	100 000	100 000
7	Բակապահ	1	100 000	100 000
8	Տեխնիկական աշխատող	1	100 000	100 000
ՀՀ ԼՈՐԻՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱՊԵՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՐԹԱՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ>> ՀՈԱԿ-Ի՝ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ				
9	Տնօրենի տեղակալ, մանկապարտեզի վարիչ	1	145 000	145 000
10	Դաստիարակ	1.25	100 000	125 000
11	Դաստիարակի օգնական	1.1	100 000	110 000
12	Խոհարար	1	100 000	100 000
13	Խոհարարի օգնական	0.5	100 000	50 000
14	Բուժքույր	0.5	100 000	50 000
15	Հավաքարար /տեխ. աշխ./	0.5	100 000	50 000
	Ընդամենը	13.85		1 520 000

ՀՀ ԼՈՐՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ-Ի ԲՅՈՒՋԵՆ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԵՐԻՆԵ ՍՈՍՅԱՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, „ Բյուջետային
համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ
կետի դրույթներով՝ **հ ա մ ա յ ն ք ի ա վ ա գ ա ն ի ն.**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

Հաստատել Շահումյան համայնքի 2021թ-ի բյուջեն:

1. Եկամուտների գծով

Ընդամենը - 86 747 800 /ութսունվեց միլիոն յոթ հարյուր քառասունյոթ հազար ութ
հարյուր/ դրամ

այդ թվում՝

· վարչական բյուջեի մասով - 86 747 800 /ութսունվեց միլիոն յոթ հարյուր
քառասունյոթ հազար ութ հարյուր/ դրամ

· ֆոնդային բյուջեի մասով - 0 /զրո/ դրամ

2. Ծախսերի գծով

Ընդամենը - 86 747 800 /ութսունվեց միլիոն յոթ հարյուր քառասունյոթ հազար ութ
հարյուր/ դրամ

այդ թվում՝

· վարչական բյուջեի մասով - 86 747 800 /ութսունվեց միլիոն յոթ հարյուր
քառասունյոթ հազար ութ հարյուր/ դրամ

· ֆոնդային բյուջեի մասով - 0 /զրո/ դրամ:

Համայնքի ղեկավար՝

ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՍԵՐԻՆԵ ՍՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՐՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ
ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ **7 500 յոթ հազար հինգ հարյուր դրամ**

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **15000 տասնհինգ հազար դրամ,**

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **25 000 քսանհինգ հազար դրամ**

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **25 000 քսանհինգ հազար դրամ**

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **50000 հիսուն հազար դրամ**

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **1 500 մեկ հազար հինգ հարյուր դրամ**

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **2 500 երկու հազար հինգ հարյուր դրամ**

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ **1 500 մեկ հազար հինգ հարյուր դրամ**

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ **2500 երկու հազար հինգ հարյուր դրամ**

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **200 000 երկու հարյուր հազար դրամ**

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **30 000 երեսուն հազար դրամ**

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **25 000 քսանհինգ հազար դրամ**

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **3 000 երեք հազար դրամ**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **3 900 երեք հազար ինը հարյուր դրամ**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **6 000 վեց հազար դրամ**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **7 500 յոթ հազար հինգ հարյուր դրամ**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **13 500 տասներեք հազար հինգ հարյուր դրամ**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **30 000 երեսուն հազար դրամ**

բ. օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **3 000 երեք հազար դրամ**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **3 900 երեք հազար ինը հարյուր դրամ**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **6 000 վեց հազար դրամ**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **7 500 յոթ հազար հինգ հարյուր դրամ**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **13 500 տասներեք հազար հինգ հարյուր դրամ**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **30 000 երեսուն հազար դրամ**

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի

կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ **105 մեկ հարյուր հինգ դրամ** մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ **5 000 հինգ հազար դրամ**

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **50 000 հիսուն հազար դրամ**

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ **250 000 երկու հարյուր հիսուն հազար դրամ**

դ. խաղատների համար՝ **500 000 հինգ հարյուր հազար դրամ**

ե. շահումով խաղերի համար՝ **250 000 երկու հարյուր հիսուն հազար դրամ**

զ. վիճակախաղերի համար՝ **100 000 մեկ հարյուր հազար դրամ**

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **2 600 երկու հազար վեց հարյուր դրամ**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **5100 հինգ հազար մեկ հարյուր դրամ**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **7600 յոթ հազար վեց հարյուր դրամ**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **10100 տաս հազար մեկ հարյուր դրամ**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **15100 տասնհինգ հազար մեկ հարյուր դրամ**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **25100 քսանհինգ հազար մեկ հարյուր դրամ**

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **500 հինգ հարյուր դրամ**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **1000 մեկ հազար դրամ**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **2000 երկու հազար դրամ**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **4000 չորս հազար դրամ**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **7 500 յոթ հազար հինգ հարյուր դրամ**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **12 500 տասներկու հազար հինգ հարյուր դրամ**

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ավտոմոբիլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **1000 մեկ հազար դրամ**

բ. թունդ ավտոմոբիլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **1 750 մեկ հազար յոթ հարյուր հիսուն դրամ**

գ. սոցիալական գովազդի համար՝ 0 զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ **750 յոթ հարյուր հիսուն դրամ**

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,՝ **188 հարյուր ութսունութ դրամ**

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով՝ **75 յոթանասունհինգ դրամ**

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (գինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **50 000 հիսուն հազար դրամ**

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրովտրոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ **5 000 հինգ հազար դրամ**

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **150 000 մեկ հարյուր հիսուն հազար դրամ**

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **750 000 յոթ հարյուր հիսուն հազար դրամ**

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **1 500 000 մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամ**

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **2 100 000 երկու միլիոն մեկ հարյուր հազար դրամ**

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **3 000 000 երեք միլիոն դրամ:**

16) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **50 000 հիսուն հազար դրամ.**

17) համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝

ա. կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում՝ **10 000 տասը հազար ՀՀ դրամ:**

բ. հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում՝ **100000 հարյուր հազար ՀՀ դրամ:**

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ՝

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **5000 հինգ հազար դրամ**

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **5000 հինգ հազար դրամ**

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **5000 հինգ հազար դրամ**,

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **2000 երկու հազար դրամ**.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **5000 հինգ հազար դրամ**.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **5000 հինգ հազար դրամ**.

7) Համայնքի կողմից աղբահանության վճարների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանվում է.

ա. Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական՝ **100 մեկ հարյուր ՀՀ դրամ**:

բ. Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

. առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով ամսեկան՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ **100 մեկ հարյուր ՀՀ դրամ**.

. հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար ամսեկան՝ **30 երեսուն ՀՀ դրամ**.

. վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար ամսեկան՝ **20 քսան ՀՀ դրամ**.

. գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ **5 հինգ ՀՀ դրամ**, իսկ զորանոցների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ **8 ութ ՀՀ դրամ**.

. արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար ամսեկան՝ **10 տասն ՀՀ դրամ**.

. շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար՝ ըստ տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի, համաձայն սույն ենթակետի 1-5-րդ պարբերություններով սահմանված դրույքաչափերի, եթե աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին՝ կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն ենթակետի 1-5-րդ պարբերություններով սահմանված դրույքաչափով.

գ. Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար ամսեկան՝ **50 հիսուն ՀՀ դրամ:**

8) Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար աղբահանության վճարը սահմանվում է ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3000 երեք հազար ՀՀ դրամ

9) Ոռոգման ջրի մատակարարման համար այն համայնքներում, որոնք ներառված չեն «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ստեղծված ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքներում՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի, օգտվող յուրաքանչյուր տնտեսության համար սահմանել ամսեկան **500 հինգ հարյուր դրամ:**

10) համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով սեփականաշնորհված բնակարանների 1 ք.մ-ի համար ամսեկան՝ **6 վեց դրամ:**

11) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար՝ **4000 չորս հազար դրամ:**

12) համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար՝ **2000 երկու հազար դրամ:**

13) համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար չի սահմանվում՝ անվճար:

14) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ **1000 մեկ հազար դրամ** փոխհատուցման վճար.

15) համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ՝ մեկ պայմանական միավոր անասունի համար ամսեկան կազմում է փոխհատուցման գումարի չափով՝ **100 /մեկ հարյուր/ դրամ:**

Աշխատակազմի քարտուղար՝

Ռաիսա Մինասյան

(Անուն, ազգանուն)

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

Հաստատված է Շահումյան համայնքի

(քաղաքային, գյուղական համայնքի անվանումը)

ավագանու 2020 թվականի -ի N -ն որոշմամբ
(ամիս, ամսաթիվ)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ՄԱՆՈՒԿՅԱՆ

(Անուն, ազգանուն, հայրանուն)

Հատված 1
Համայնքի բյուջեի եկամուտները

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդված ի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200+տող 1300)		86747.8	86747.8	0
	այդ թվում՝				
1100	1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ (տող 1110 + տող 1120 + տող 1130 + տող 1150 + տող 1160)	7100	12154.8	12154.8	X
	այդ թվում՝				
1110	1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից	7131	4232.6	4232.6	X
	այդ թվում՝				
1111	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար		1033.2	1033.2	X
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար		3199.4	3199.4	X
1120	1.2 Գույքային հարկեր այլ գույքից	7136	7683.2	7683.2	X
	այդ թվում՝				
1121	Գույքահարկ փոխադրամիջոցների համար		7683.2	7683.2	X
1130	1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	7145	239.0	239.0	X
	այդ թվում՝				
1131	Տեղական տուրքեր (տող 1132 + տող 1135 + տող 1136 + տող 1137 + տող 1138 + տող 1139 + տող 1140 + տող 1141 + տող 1142 + տող 1143 + տող 1144+տող 1145+ տող 1146+տող 1147)	71452	239.0	239.0	X
	այդ թվում՝				
1132	ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարություն (տեղադրման) թույլտվության համար (տող 1133 + տող 1134),		15.0	15.0	X
	որից՝				
1133	աա) Հիմնական շինությունների համար		15.0	15.0	X
1134	աբ) Ոչ հիմնական շինությունների համար		0.0		X
1135	բ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքներ (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) կատարելու թույլտվության համար		0.0		X
1136	գ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար		0.0		X
1137	դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար		144.0	144.0	X

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդված ի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1138	ե) Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար		0.0		X
1139	զ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար		0.0		X
1140	է) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար		0.0		X
1141	ը) Համաքաղաքային կանոններին համապատասխան Երևան քաղաքի և քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար		0.0		X
1142	թ) Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար		0.0		X
1143	ժ) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար		0.0		X
1144	ժա) Համայնքի տարածքում (բացառությամբ թաղային համայնքների) մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար		0.0		X
1145	ժբ) Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար		0.0		X
1146	Ժգ) Ավտոկայանատեղի համար		0.0		X
1147	Ժդ) Համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար		0.0		X
1148	Ժե) Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար		80.0	80.0	X
1149	Ժզ) Հայաստանի Հանրապետության համայնքերի անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար		0.0		X
1150	ժէ) այլ տեղական տուրքեր		0.0		X
1150	1.4 Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ	7146	0.0	0.0	X
	այդ թվում՝		0.0		
1151	Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր		0.0	0.0	X
	(տող 1152 + տող 1153)				
	այդ թվում՝				

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդված ի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1152	ա) Քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար		0.0		X
1153	բ) Նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար		0.0		X
1160	1.5 Այլ հարկային եկամուտներ	7161	0.0	0.0	X
	(տող 1161 + տող 1165)				
	այդ թվում՝				
1161	Օրենքով պետական բյուջե ամրագրվող հարկերից և այլ պարտադիր վճարներից մասհանումներ համայնքների բյուջեներ		0.0	0.0	X
	(տող 1162 + տող 1163 + տող 1164)				
1162	ա) Եկամտահարկ		0.0		X
1163	բ) Շահութահարկ		0.0		X
1164	գ) Օրենքով պետական բյուջեին ամրագրվող այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումները՝ յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքով սահմանվող չափերով		0.0		X
1165	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ		0.0		X
1200	2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	7300	71071.0	71071.0	0
	(տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260)				
	այդ թվում՝				
1210	2.1 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից	7311	0.0	0.0	X
	այդ թվում՝				
1211	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետությունների տեղական ինքնակառավարման մարմիններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով		0.0		X
1220	2.2 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից	7312	0.0	X	0
	այդ թվում՝				

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդված ի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1221	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետությունների տեղական ինքնակառավարման մարմիններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով		0.0	X	
1230	2.3 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից	7321	0.0	0.0	X
	այդ թվում՝				
1231	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով		0.0		X
1240	2.4 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից	7322	0.0	X	0
	այդ թվում՝				
1241	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով		0.0	X	
1250	2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	7331	71071.0	71071.0	X
	(տող 1251 + տող 1254 + տող 1257 + տող 1258)				
	որից՝				
1251	ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ		71071.0	71071.0	X
1254	բ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ		0.0	0.0	X
	այդ թվում՝				
1255	բա) Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների պետության կողմից փոխհատուցվող գումարներ		0.0		X
1256	բբ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ		0.0	0.0	X
1257	գ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		0.0	0.0	X
1258	դ) Այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ		0.0		X
1260	2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	7332	0.0	X	0.0
	(տող 1261 + տող 1262)				
	այդ թվում՝				
1261	ա) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		0.0	X	
1262	բ) Այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ		0.0	X	

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդված ի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1300	3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	7400	3522.0	3522.0	0
	(տող 1310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370 + տող 1380+ տող 1390)				
	այդ թվում՝				
1310	3.1 Տոկոսներ	7411	0.0	X	0
	այդ թվում՝				
1311	Բանկերում համայնքի բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացված տոկոսավճարներ		0.0	X	
1320	3.2 Հափառածիններ	7412	0.0	0.0	X
	այդ թվում՝				
1321	Բաժնետիրական ընկերություններում համայնքի մասնակցության դիմաց համայնքի բյուջե մուտքագրվող շահաբաժիններ		0.0		X
1330	3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ	7415	1522.0	1522.0	X
	(տող 1331 + տող 1332 + տող 1333 + 1334)				
	այդ թվում՝				
1331	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ		1522.0	1522.0	X
1332	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձավճարներ		0.0		X
1333	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ		0.0		X
1334	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր		0.0		X
1340	3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից	7421	0.0	0.0	X
	(տող 1341 + տող 1342+ տող 1343)				
	այդ թվում՝				
1341	Համայնքի սեփականություն հանդիսացող, այդ թվում՝ տիրագուրկ, համայնքին որպես սեփականություն անցած ապրանքների (բացառությամբ հիմնական միջոց, ոչ նյութական կամ բարձրարժեք ակտիվ հանդիսացող, ինչպես նաև համայնքի պահուստներում պահվող ապրանքանյութական արժեքների) վաճառքից մուտքեր		0.0		X
1342	Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ		0.0		X
1343	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարներ		0.0	0.0	X
1350	3.5 Վարչական գանձումներ	7422	1600.0	1600.0	X
	(տող 1351 + տող 1352)				
	այդ թվում՝				
1351	Տեղական վճարներ		1600.0	1600.0	X

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդված ի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1352	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ		0.0		X
1360	3.6 Մուտքեր տույժերից, տուգանքներից	7431	0.0	0.0	X
	(տող 1361 + տող 1362)				
	այդ թվում՝				
1361	Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ		0.0	0.0	X
1362	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող գծով տույժերից		0.0		X
1370	3.7 Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	7441	0.0	0.0	X
	(տող 1371 + տող 1372)				
	այդ թվում՝				
1371	Ֆիզիկական անձանց և կազմակերպությունների նվիրաբերությունից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված արտաքին աղբյուրներից		0.0		X
1372	Ֆիզիկական անձանց և կազմակերպությունների նվիրաբերությունից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված ներքին աղբյուրներից		0.0		X
1380	3.8 Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	7442	0.0	X	0
	(տող 1381 + տող 1382)				
	այդ թվում՝				
1381	Նվիրատվության, ժառանգության իրավունքով ֆիզիկական անձանցից և կազմակերպություններից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված արտաքին աղբյուրներից		0.0	X	
